

ՍՐԲԱՇՈՂ ԵՐԿԻՆՔ

Ձէի տեսած ես երբեք երկինք մ'այսքան կապուտակ,
Ու հոգ մը սուրբ, անհամար շրթունքներէ մեծարուած:
Հոս ամէն բան հաւատքի մաքուր շունչ մը ունի տաք,
Հոգէն ժայթքող դէպի վեր եւ անկէ ալ առ Աստուած:

Ամէն անկին խորհուրդ մը կը փսփսայ ականջիդ,
Ամէն քար ու ամէն ժայռ գաղտնիք մ'ունին անմեկին,
Սարսուռ մ'անհուն երկինքէն կ'իջնէ ցօղի պէս վընիտ,
Կը պարուրէ, կ'ընէ քեզ կարծես ճոր մարդ մը կրկին:

Գալիլիական սրբաշող այս երկնքին տակ պայծառ,
Բան մը կը զգաս թրթռացող օդին, լոյսին մէջ մաքուր.
Անհունէն վեր անսահման՝ միտքդ կ'երթայ յամրաբար

Բարձունքներուն այն խոնարհ, ուր օր մ'Աստուած եկաւ ժուռ:
Կը սրբանայ աչքերուդ հետ հոգիդ ալ մանկունակ,
Կը կալանուիս սուրբ դողով մ'այս հնօրեայ երկնի տակ:

ՀՄԱՅԵԱԿ ԳՐԱՆԵԱՆ

Երուսաղէմ, 1909